

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՏԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2020 թ. փետրվարի 19-ի թիվ 6 նիստի

ԼՍԵՑԻՆ.- Ժուռնալիստիկայի ֆակուլտետում գործող «Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ» և «Լրագրություն» մագիստրոսական ծրագրերի մոնիթորինգի վերաբերյալ Ն. Ն. Մարտիրոսյանի ամփոփիչ հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ն. Է Վարդանյան, Ա. Շ. Ավետիսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Քայլեր ձեռնարկել կրթական ծրագրերի նյութատեխնիկական բազան բարելավելու ուղղությամբ,
բ) ամբիոններին հանձնարարել՝ վերանայել մասնագիտական առարկաներին հատկացված ժամաքանակը, կրեդիտատարությունը, լրամշակել առարկայացանկը,
գ) ԵՊՀ վարչակազմին խնդրել՝ վերանայել ֆակուլտետի՝ երկրորդ հերթով սովորելու հարցը, և, մասնագիտության յուրահատկությամբ պայմանավորված, պայմաններ ստեղծել ուսումնառությունը առաջին հերթով կազմակերպելու համար:
դ) Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մագիստրոսական ծրագրերի մոնիթորինգի արդյունքները գնահատել դրական:

ԼՍԵՑԻՆ.- Ա. Ռ. Մենեմշյանի հաղորդումը առաջին լուծարքային շրջանի մասին:

ԼՍԵՑԻՆ.- Առկա ուսուցման 4-րդ և հեռակա ուսուցման 5-րդ կուրսերի պրակտիկայի կազմակերպման ընթացքի մասին ամբիոնների վարիչներ Դ.Վ.Պետրոսյանի, Մ. Մ. Հովսեփյանի հաղորդումը:

ԼՍԵՑԻՆ.- Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի հեռակա ասպիրանտ Արման Գառնիկի Ղարիբյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավարին հաստատելու խնդրանքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ.

Մենեմշյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Ա. Ղարիբյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ատելության խոսքը հայաստանյան լրատվամիջոցներում (2018-2021 թթ.)» վերնագրով:

բ) Գիտական ղեկավար նշանակել բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Դ. Վ. Պետրոսյանին:

ԼՍԵՑԻՆ.- Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի հեռակա ասպիրանտ Լիլիթ Հայրոյի Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավարին հաստատելու ինդրանքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ.

Մենեմշյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Լ. Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մեդիայի անհատականացում. միջազգային փորձը և հայաստանյան իրականությունը» վերնագրով:

բ) Գիտական ղեկավար նշանակել բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Դ. Վ. Պետրոսյանին:

ԼՍԵՑԻՆ.- Ա. Շ. Ավետիսյանի հաղորդումը «Կրթություն և կարիերա EXPO 2020»-ին Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մասնակցության մասին:

ԼՍԵՑԻՆ.- Ա. Շ. Ավետիսյանի հաղորդումը, այն մասին, որ ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի «Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ» մագիստրոսական ծրագրը, մի քանի այլ կրթական ծրագրերի հետ մասնակցում է ԵՊՀ պիլոտային ծրագրի, որի նպատակն է կրթական ծրագրերի մասնագրերում սահմանել դասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջներ՝ ծրագրի նպատակին և կրթական վերջնարդյունքին համապատասխան:

Ա. Ավետիսյանը ներկայացրեց «Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ» մագիստրոսի կրթական ծրագրում դասավանդող դասախոսական կազմին ներկայացվող պահանջները:

ԼՍԵՑԻՆ.- Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Մարիամ Կարապետյանի «Հաղորդակցության ոճեր և մեդիահաղորդակցություն (դասախոսություններ)» աշխատանքը տպագրության երաշխավորելու խնդրանքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Մ. Կարապետյանի «Հաղորդակցության ոճեր և մեդիահաղորդակցություն (դասախոսություններ)» աշխատանքը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ.- Ն. Է. Վարդանյանի հաղորդումը պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրագույն ծրագրի 2018/19 ուստարվա և 2016-2019 թթ. արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ն. Է. Վարդանյան, Դ. Հ. Այվերդյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչությանը ներկայացնել հետևյալ դիտարկումներն ու առաջարկները.

ա) Անգլերենի դասավանդման ձևաչափն ու բովանդակությունը, ընդհանուր առմամբ, թույլ չեն տալիս լիարժեքորեն ներկայանալ լեզվի մակարդակի ստուգման քննությանը:

բ) Դասախոսների միավորներն ամփոփող հաշվետվության մեջ կան անճշտություններ. որոշ դասընթացների համար տրվելիք միավորները բացակայում են:

ՆԻՍԻ ՆԱԽԱԳԱՐ

Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Ռ. ՄԵՆԵՄՇՅԱՆ

